ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ԲԵՐՔԱՆՈՒՇ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ու Մ № 08

« 18 » « 03 » 2021թ.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԵՐՔԱՆՈՒՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021Թ. ՄԱՐՏԻ 18-Ի ԹԻՎ 02 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով.

Արարատի մարզի Բերքանուշ համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ու Մ Է՝

Հաստատել Արարատի մարզի Բերքանուշ համայնքի ավագանու 2021թ. մարտի 18-ի թիվ 02 հերթական նիստի օրակարգը՝

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ 4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի Բերքանուշ համայնքի գլխավոր հատակագծի նախագիծը (գոտևորման նախագիծը) հաստատելու մասին:

Որոշումն ընդունվեց միաձայն

1. Իսաջանյան Գոհարիկ կողմ
2. Աղամյան Վարդան կողմ
3. Հովսեփյան Հովսեփ կողմ
4. Բաղդամյան Սուրիկ կողմ
5. Հովնանյան Սեյրան կողմ

Համայնքի ղեկավար՝ Մ.Գ. Հայրապետյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ԲԵՐՔԱՆՈՒՇ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ № 09

« 18 » «03» 2021թ.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ 4 ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԲԵՐՔԱՆՈՒՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՆԱԽԱԳԻԾԸ (ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ) ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 29-րդ մասով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի $14^3$ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացությունն ու համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին

## ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ 4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի Բերքանուշ համայնքի գլխավոր հատակագծի նախագիծը (գոտևորման նախագիծը) համաձայն հավելվածի:

2. Գլխավոր հատակագծով սահմանված՝ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությունները համարել փոփոխված «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի $14^3$ հոդվածի 5-րդ մասի դրույթի պահանջի ապահովման պայմանով և հավելվածի «Հողերի օգտագործման սխեման (հողամասերի կատեգորիայի տրանսֆորմացիան)» գծագրին (Այսուհետ՝ Գծագիր) և նրանում սահմանված կառուցապատման փուլերին համապատասխան, ընդ որում.

| | | | | |
|---|---|---|---|---|
| ԳԲ-4 | Այլ հողեր | 0.03 | Բնակելի կառուցապատման (տնամերձ կառուցապատում) | 0.03 |
| | Ընդհանուր | | 1.09 | |
| ԳԲ-5 | Այլ հողեր | 0.19 | Ընդհանուր օգտագործման (փողոցներ) | 0.19 |
| | Ընդհանուր | | 1.9 | |
| | | | Էներգետիկայի, տրնսպորտի, կապի և կոմունալ ենթ. հողերից՝ | |
| ԳԷ-1 | Վարելահող | 0.5 | Կոմունալ ենթակառուցվածքների /գերեզմանոց/ | 0.5 |
| | Ընդհանուր | | 0.50 | |
| | Ընդհամենը վերջնաժամկետ | | 1.78 | |
| | Հեռանկարային միջոցառումներ (10-15 տարի) | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | Գյուղատնտեսական նշանակության հողերից՝ | | | |
| | | | Էներգետիկայի, տրնսպորտի, կապի և կոմունալ ենթ. հողերից՝ | |
| ԳԷ-2 | Վարելահող | 1.63 | Կոմունալ ենթակառուցվածքների /աղբավայր/ | 1.63 |
| Ընդհանուր | | 1.63 | | |
| Ընդամենը հեռնկար | | 1.63 | | |
| Ընդհանուր | | 6.79 | | |

Բերքանուշ 1

Հողամասերի նպատակային նշանակության փոփոխության կատեգորիայի տրանսֆորմացիայի

| Առկա | | Փոփոխված | |
|---|---|---|---|
| Նպատակ. նշանակության հողատեսք | Տարածք հա | Նպատակ. նշանակության գործառնական նշանակության | Տարածք հա |
| Գյուղատնտեսության վարելահող | 15.67 | Բնկավայրերի բնակելի կառուցապատման, ընդհանուր օգտագործման հասարակական կառուցապատման | 21.87 |
| Գյուղատնտեսության պտղատու այգիներ | 2.55 | | |
| Գյուղատնտեսության խաղողի այգիներ | 0.75 | | |
| Գյուղատնտեսության այլ | 2.90 | | |
| Գյուղատնտեսության պտղատու այգիներ | 1.30 | Արդյունաբերության գյուղարտադրական | 2.90 |
| Գյուղատնտեսության վարելահող | 1.60 | | |
| Գյուղատնտեսության վարելահող | 1.02 | Հատուկ պահպանվող տարածքների | 1.02 |
| Ընդամենը՝ | -25.79 | | +25.79 |

3. Ճյուղային և համայնքային զարգացման ծրագրերում սահմանված կարգով ներառել գլխավոր հատակագծի իրականացման համապատասխան միջոցառումներն՝ ըստ սահմանված հերթականության և «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի $14^3$ հոդվածի 14-րդ և 30-րդ մասերին համապատասխան՝ հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունները պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման տվյալներում, համայնքի հողային հաշվեկշռում և արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց միաձայն

1. Իսաջանյան Գոհարիկ կողմ
2. Ադամյան Վարդան կողմ
3. Հովսեփյան Հովսեփ կողմ
4. Բաղրամյան Սուրիկ կողմ
5. Հովնանյան Սեյրան կողմ

Համայնքի ղեկավար՝ Մ.Գ. Հայրապետյան